Արձանագրություն N 2

ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2026/Ա-51 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 11 » « 06 » 2026թ. ժ. 10:00**

Նիստին մասնակցում էին՝

- ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության շինարարության պլանավորման և վերահսկողության բաժնի պետ Ա. Հովհաննիսյան (հանձնաժողովի նախագահ),
- ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության շինարարության պլանավորման և վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ Ռ. Բերբերյան (գնահատող անդամ),
- ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության շինարարության պլանավորման և վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ Տ. Հարությունյան (գնահատող անդամ),
- ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության շինարարության պլանավորման և վերահսկողության բաժնի առաջատար մասնագետ Գ. Բաղդասարյան (բացող անդամ),
- ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության շինարարության պլանավորման և վերահսկողության բաժնի գլխավոր ճարտարագետ Ք.Ավետիսյան (բացող անդամ),
- ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Սարգսյան (հանձնաժողովի քարտուղար):

ՀՀ ներքին գործերի նախարարության կարիքների համար **խորհրդատվական ծառայությունների** ձեռքբերման նպատակով հայտարարված **ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2026/Ա-51** ծածկագրով ընթացակարգի բացման և գնահատման նիստում արձանագրվեց՝

Օրակարգ

1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2026/Ա-51 ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետին՝ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրել են հետևյալ մասնակիցները.

N	Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը	Հայտ ներկայացրած մասնակցի հասցեն, հեռախոսահամարը
1	ԳԵՈՔԱՐՏ ՍՊԸ	Ք, Վանաձոր Նալբանդյան 5/3-2 , Հեռ.՝ 094905080, էլ. հասցե՝ է՝ nartovmas@list.ru

2. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

Մասնակցի ներկայացրած հայտը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան, ծրագրի կողմից ճանաչվում է որպես վավեր, և համակարգը թույլ է տալիս բացել հայտերը:

3. *Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գները.*

Չափաբաժին 2. Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում

/ՀՀ ՆԳՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության Եղեգնաձորի հրշեջ փրկարական կայանի գազաֆիկացման, ջրամատակարարման և ջռահեռացման համակարգի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություններ/ CPV- 71241200/507

Նախահաշվային գինը			**1 889 550**	
Չափաբաժին	**Մասնակցի անվանումը**	**Գինն առանց ԱԱՀ**	**ԱԱՀ**	**Ընդհանուր գինը**
1	**ԳԵՈՔԱՐՏ ՍՊԸ**	**1 880 000**	**-**	**1 880 000**

4. Հանձնաժողովը որոշեց՝

1) Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ ***«ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ-ի հայտը 2-րդ չափաբաժնով մերժել****, քանի որ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում (Հավելված 2) նշված գնման առարկայի (ծառայության) անվանումը չի համապատասխանում հրավերով սահմանված անվանմանը:*

2) ***ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2026/Ա-51*** *ծածկագրով գնման ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժիններով համարվում է չկայացած, քանի որ* ***1-ին չափաբաժնով*** *ոչ մի հայտ չի ներկայացվել, իսկ* ***2-րդ չափաբաժնով*** *համարվում է չկայացած, քանի որ վերոգրյալ չափաբաժնով հայտ ներկայացրած մասնակցի ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերի պայմաններին և մերժվել է, ուստի հանձնաժողովը, հիմք ընդունելով* ***«Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ*** *կետերը գնման ընթացակարգը* ***1-ին և 2-րդ չափաբաժիններով հայտարարում է չկայացած:***

5. Տեղեկություններ ընթացակարգի ընթացքի մասին.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից մինչև **10-րդ օրացուցային օրը** ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվեց որոշում՝ կողմ 5 դեմ 0 :

Հանձնաժողովի Նախագահ՝
ՇՊՎ բաժնի պետ — Ա. Հովհաննիսյան

Հայտը գնահատող անդամներ՝
ՇՊՎ բաժնի գլխավոր մասնագետ — Ռ. Բերբերյան
ՇՊՎ բաժնի գլխավոր մասնագետ — Տ. Հարությունյան

Հայտը բացող անդամներ՝
ՇՊՎ բաժնի առաջատար մասնագետ — Գ. Բաղդասարյան
ՇՊՎ բաժնի գլխավոր ճարտարագետ — Ք.Ավետիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝
ՏԿ ԳՀ գլխավոր մասնագետ — Ա. Սարգսյան